Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Երաժշտություն

Թեմա՝ ՏՀՏ-ի օգտագործումը երաժշտության դասերին

Կազմեց Վիկտորիա Վարդանյան

Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

Բովանդակություն

Ներածություն----------3 էջ

Գլուխ 1----------5 էջ

Գլուխ 2----------8 էջ

Եզրակացություն----------14 էջ

Հավելված----------15 էջ

Ներածություն

Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: 21-րդ դարում տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը: Այս ամենը արագացրեց վրա հասած համաճարակը և, իհարկե, իր քիչ դերը չունեցավ նաև 44 օրյա պատերազմը: 2020թ.-ի մարտից սկսված հեռավար ուսուցման արդյունքում, Հայաստանի դպրոցները նախ փնտրտուքի, հետագայում նաև հետաքրքիր փորձարկումների ու փոփոխությունների փուլ մտան: Կարելի է ասել մինչ օրս էլ ուսումնական հաստատություններում բարելավվում է հեռավար ուսուցումն ավելի օպտիմալ կազմակերպելու պրոցեսը: Համաճարակն ամբողջ կրթական համակարգը դարձրել է համահայկական մի մեծ կրթական լաբորատորիա, որտեղ կատարվող փորձերին մասնակցում են թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները և թե՛ ծնողական համայնքը: Կրթական համակարգում ստեղծվել են հատուկ պայմաններ հեռավար ուսուցման հնարավորությունները փորձարկելու համար: Ակնհայտ է, որ որքան համակարգված ու արդյունավետ կիրառենք կրթական նոր գործիքները, այնքան կնվազեցնենք համաճարակի բացասական ազդեցությունը կրթական գործընթացների վրա:

Կրթական համակարգի համար անցումային այս փուլը շատ հետաքրքիր է նրանով, որ տեսանելի է դարձնում այն հիմնական խնդիրները, որոնք տարիներ շարունակ կան կրթության ոլորտում. ուսուցչի դերի բարձրացումը, հմտությունների

զարգացումը, դասագրքերի բովանդակային փոփոխությունը նմանատիպ իրավիճակում է՛լ ավելի հրատապ լուծման խնդիրներ են դառնում։

21-րդ դարը կրթական համակարգում դրել է իր հստակ պահանջները։ Կախված տեխնոլոգիաների զարգացման, ինֆորմացիայի հնեցման կամ արագ փոփոխման, մարդկանց ժամանակի սղության հետ կրթական համակարգը պետք է դուրս գար նոր և ոչ ստանդարտ հարթակ՝ համապատասխանելով արդի ժամանակաշրջանի բոլոր միտումներին։ Տեխնոլոգիան ավանդական ուսուցման և ուսուցման գործընթացում հեղափոխություն կատարելու ներուժ ունի։ Այն կարող է վերացնել կրթության խոչընդոտները, որոնք պարտադրված են տարածության և ժամանակի կողմից, և կտրուկ ընդլայնել ցմահ ուսուցման հասանելիություն։

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել, կրթական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, գնահատել դրանց դերն ու առաջնահերթությունը հեռավար և առկա դասերի ընթացքում, անդրադառնալ հեռավար ուսուցման խոչընդոտներին։

Նպատակին հասնելու համար առաջադրեկ հետևյալ խնդիրները.

. Ուսումնասիրել թեմային առնչվող գրականություն, այլ աղբյուրներ

. Պարզաբանել Տեղեկատվական տեխնոլոգիաների հեռավար ուսուցում հասկացությունները

. Կիրառել ՏՀՏ պատմության դասերին

. Կատարել հեռավար և ավանդական ուսուցման ձևերի համեմատական վերլուծություն

. Կատարել հարցումներ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ

. Ուսումնասիրել հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթական կազմակերպման և իրականացման հարցումների արդյունքները

. Կատարել եզրահանգում։

Գլուխ 1.1 Կրթությունը արդի տեխնոլոգիաների ժամանակաշրջանում

Անհատները, կազմակերպությունները, հասարակությունը կարիք ունեն օգտագործել տարաբնույթ համակարգեր՝ տեղեկատվություն հավաքագրելու, մշակելու, պահպանելու, վերհանելու և հաղորդելու նպատակով: Այդպիսի համակարգերը կոչվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Տեղեկատվական համակարգերը տվյալների, տեղեկատվական տեխնոլոգիաների, մշակման ընթացակարգերի և այն մարդկանց միավորումն են, որոնք հավաքագրում, մշակում, օգտագործում և պահպանում են այդ տվյալները (Gordon S. R., Gordon J. G., Information Systems, a Management Approach, New York 1996, p. 6-7):

Անհատի համար տեղեկատվական համակարգի անհրաժեշտությունը բաժանվում է երկու մասի, առաջին՝ տեղեկատվական համակարգ, որի գոյությունը պայմանավրված է անհատի աշխատանքային գործունեությամբ, և երկրորդ՝ անհատի անձնական տեղեկատվության պահպանմամբ և կիրառմամբ:

Մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ տեխնոլոգիան ինքնին հաճախ ներառում է տեխնոլոգիական լուծումների գործնական կիրառում ծրագրային ապահովման մշակման մեջ՝ ուսուցմանը, ուսմանը և մարտահրավերներին՝ ստեղծագործական հետազոտության մեջ: Կրթության համար նոր տեխնոլոգիական գործիքները գրավիչ և բեվանդակալից ձևերով օգտագործելու համար անհրաժեշտ է հասկանալ կրթական միջավայրում տեխնոլոգիաների ընդունման միտումները:

Տեղեկատվական և հաղորդացման տեխնոլոգիաների կիրառումը, շատ մեծ հեռանկարներ բացելով մարդկության համար, միաժամանակ առաջադրում է բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումից է կախված ինչպես հասրակության յուրաքանչյուր անդամի

ճակատագիրը և պետության զարգացման ուղղությունները, այնպես էլ, ընդհանուր առմամբ, ամբողջ հասարակության գոյատևումը: Ժամանակակից հասարակությունը դառնում է գլոբալ տեղեկատվական հասարակություն, որը գիտելիքների և տեղեկատվության վրա հիմնված ինտելեկտուալ հասարակություն է; Այդպիսի հասարակության հիմնական կապիտալը մարդկային կապիտալն է: Այդ իմաստով անհրաժեշտություն է դառնում յուրաքանչյուր մարդու կթությունը և ներգրավումը տեղեկատվական հասարակության մեջ: Այս գործում մեծ է հեռավար ուսուցման դերը;

(Կրթության տեխնոլոգիայի միտումները ժամանակակից հասարակության համար, https://elearningindustry.com/trends-in-education-technology-modern-society):

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում անանընդհատ յուրացնել նոր գիտելիքների և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Բայց սա ճիշտ է ոչ միայն մարդկանց, այլև կազմակերպությունների, ինչպես նաև ամբողջ հասարակության վերաբերյալ, քանի որ հասարակության կրթական մակարդակը և սովորելու կարողությունները սկզբունքային նշանակություն են ստանում երկրի զարգացման և միջազգային տնտեսական մրցունակության համար:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության եւ հաղորդակցության արդի միջոցների զարգացման եւ տարածման հետ:Կրթության եւ ՏՀՏ-ի փոխհարաբերության մյուս կողմը հենց կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումը, ուսուցման եւ ուսումնառության արդյունավետության մեծացումն է:

Այսօրվա ուսուցիչը պետք է հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները և զգա, թե որքանով է այն հեշտացնում թե՝ իր աշխատանքը, թե՝ աշակերտների՝ դարձնելով դասն առավել մատչելի, հետաքրքիր, կիրառական և աշակերտակենտրոն:

ՏՀՏ-ի գործառությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում աշակերտը

ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում. դասարանում, շրջապատում կա մի բան, որ կախված է իրենից:

Ժամանակակից կրթական համակարգին ներկայացվող պահանջներն ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել այսպես.

1) Խնդրահարույց իրավիճակին ստեղծագործական մոտեցում ցուցաբերող, արդիական խնդիրների լուծման համար ոչ միայն արդեն հայտնի ձևեր և մեթոդներ կիրառող, այլև նոր մոտեցումներ ու լուծումներ գտնող մասնագետների ձևավորման պահանջ,
2) ապագա մասնագետի անձնական և բարոյական որակների պատասխանատվության, հանդուրժողականության, հաղորդակցվելու կարողության, կոլեկտիվում աշխատելու ունակության ձևավորման պահանջ,
3) նախնական տվյալներն ինքնուրույն որոնելու և մշակելու, դրանք տեղեկատվության և գիտելիքների փոխակերպելու կարողության ձևավորման պահանջ:(https://www.tandfonline.com/doi/abs.10.1080/01587919.2019.1681894?journalCode=cdie20)

Ժամանակակից հասարակության մեջ տեղեկատվական հոսքի ծավալը և վերջինիս անկառավարելի լինելը ստիպում են կատարելագործել վերլուծության և տեղեկատվությունը գիտելիքի վերածելու հայտնի մոդելները: Դա անհնար է առանց տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման: Ուստի կրթական համակարգի հեռանկարային զարգացման համար տեղեկացված լինելը կարևորագույն խնդիր է: Ընդ որում, առաջնահերթ խնդիր է ոչ թե հաշվողական տեխնիկայի, հեռահաղորդակցման ցանցերի և էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների առկայությունը (թեպետ դրանք կարևոր բաղադրիչներ են), այլ կրթական գործընթացի սկզբունքորեն նոր մոդելների մշակումն ու ներդրումը:

ուսուցանող և ստուգիչ համակարգեր, տեսագրություններ, ձայնագրություններ, էլեկտրոնային գրադարաններ, ինչպես նաև էլեկտրոնային դասագրքեր)։

Հեռավար ուսուցման կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ ուսուցման գործընթացի առանցքում ոչ թե դասական իմաստով դասավանդումն է, այլ ինքնուսուցումը, սովորողի ինքնուրույն գործունեությունը՝ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու նպատակով։

Մասնագետները պնդում են, որ ավանդական կրթությունն այսօր ճգնաժամ է ապրում ողջ աշխարհում։ Ավանդական կրթության ոչ մատչելի լինելը, պահպանողականությունը, սահմանափակվածությունը, իներցիոն բնույթը խոչընդոտում են կրթության հետագա զարգացումը։ Մինչդեռ ժամանակակից մարդու գիտելիքների պահաջը շարունակ աճում է, և այն բավարարելու համար անհրաժեշտ են նոր մեթոդներ՝ այսօրվա հագեցած տեղեկատվական-կրթական միջավայրում կողմնորոշվելու համար։

Հեռավար ուսուցման արդյունավերությունը պայմանավորված է հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հեռավար դասընթացների նախագծման և իրագործման հիմքն են։ Ուսուցման այս ձևը հեռանկարային է հատկապես անընդհատ ուսուցման իրականացման առումով։

Գլուխ 2 Հետազոտական մաս

2.1 ՏՀՏ-ի կիրառում երաժշտության դասերին

Այսօր ուսուցիչը ցանկացած կարգապահության մեջ պետք է կարողանա պատրաստել և անցկացնել զբաղմունք՝ օգտագործելով ՏՀՏ։ Դասերին համակարգչի, պրոեկտորի օգտագործումը դառնում է ամենատարածվածը՝ երեխայի հետաքրքրության պատճառով։ Երաժշտության դասերին (առկա, հեռավար) հաճախ եմ անցկացնում դիտումների, համակարգչային թեստերի օգնությամբ։ Խթանման փուլը անց եմ կացրել լուսանկարների, տեսանյութերի, գծագրերի

օգնությամբ։ Այսպես աշակերտների մոտ հետաքրքրություն է առաջանում նյութի հանդեպ։ Երաժշտության դասին Տիգրան Չուխուջյան թեման ներկայացրել եմ Power Point ծրագրոով։ Անիմացիոն քարտեզի միջոցով ներկայացրել եմ Տիգրան Չուխուջյանի աշխատանքը։ Դասի կշռադատման փուլում, ամփոփման դասերին կիրառել եմ Quizizz, Forms.google գործիքները։ Այս գործիքների միջոցով կատարել եմ գիտելիքի ստուգում։ Կազմել եմ այնպիսի ստուգիչ թեստեր, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր ունակություններին ու կարողություններին համապատասխան առաջադրանքնե, որոնք կլինեն մեկ օրինակով։ Սա ամենահարմար տարբերակներից է ապահովել շերտավոր ուսուցում, անհատական մոտեցում։ Եվ եթե դասարանում սովորում է անգամ 30 և ավելի երեխա, յուրաքանչյուրը կստանա տարբեր առաջադրանքներ, վերջիներս էլ կստուգվեն ավտոմատ։ Այս գործիքները առավել անհրաժեշտ են հեռավար ուսուցման ժամանակ, գրավոր աշխատանքներ կազմելիս։

Երաժշտության դասերին հաճախ եմ ցուցադրել ֆիլմերի դրվագներ (հայտնի կոմպոզիտորներից)։

Ձայնային և լսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագթրծումը աշակերտների մոտ բարձրացնում է մտապահելու ունակությունը։ Այս գործիքները՝ ուսուցումը դարձնում են ավելի հետաքրքիր և արդյունավետ։ Quizizz, Forms.google գործիքները հնարավորություն են տալիս վարժություններ ստեղծելիս տարբեր ձևաչափով հարցադրումներ կազմել, խառնել հարցերի հաջորդականությունը։ Թույլ են տալիս առցանց հետևել սովորողների առաջադիմությանը, հղմամբ տարածել պատրաստի վարժություններ, յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ։(Ս. Խաչատրյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ» էջ 42)։

Գլուխ 2.2 Հեռավար և ավանդական ուսուցման ձևերի համեմատական վերլուծություն

Հեռավար ուսուցման տարբերությունն առկա ուսուցումից այն է, որ նյութի էական մասը յուրացվում է ոչ թե դասարանում, այլ համացանցային տեխնոլոգիաների միջոցով, այսինքն՝ հեռավար ուսուցմամբ սովորողների աշխատանքը կամակերպվում է հիմնականում ինքնուրույն:

Առկա ուսուցման և հեռավար ուսուցման հիմնական տարբերություններն են.

1) ուսուցում՝ ըստ բնակավայրի կամ աշխատավայրի,
2) ուսումնական գործընթացի ճկուն ժամանակացույց, որը կարող է լինել ամբողջովին ազատ՝ բաց կրթության դեպքում, կամ հիմնականում ազատ՝ կապված սահմանափակ թվով ստուգողական աշխատանքների կատարման հետ (քննությունների հանձնում, օնլայն շփում ուսուցչի հետ, խմբային պարապմունքներ, ինչպես նաև լաբորատոր աշխատանքների կատարում սարքավորումների միջոցով),
3) շփում ուսուցչի հետ՝ հիմնականում հեռահաղորդակցության միջոցների օգնությամբ:

Հեռավար ուսուցման և ավանդական ուսուցման տարբերություններից կարելի է առանձնացնել մի շարք տիպիկ հոգեբանական մանկավարժական խնդիրներ, որոնք ստիպված են լուծել ուսուցիչներն ու աշակերտները: Դրանք են.

1) դժվարություններ՝ կապված ուսուցման գործընթացի մասնակիցների միջանձնային շփման հետ,
2) խնդիրներ՝ կապված արդյունավետ աշխատող փոքր ուսումնական խմբերի ձևավորման հետ՝ համագործակցված ուսուցում իրականացնելու համար,
3) խնդիրներ՝ կապված ունկնդիրների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության հետ՝ առավել արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու նպատակով,
4) ուսուցչի համապատասխանությունը հեռավար ուսուցման համար ընտրված մեթոդիկային և մանկավարժական տեխնոլոգիաներին:

Գլուխ 2.3

Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ առցանց հարցման ամփոփ արդյունքներ

Հարցված ուսուցիչների միայն 35.2%-ն է նշել, որ անցել է հեռավար ուսուցման վերաբերյալ համապատասխան վերապատրաստում (663 ուսուցիչ)։ Նրանցից 63.5%-ը նշել է, որ վերապատրաստումները կազմակերպվել են ՀՀ ԿԳՄՄՆ ԿՏԱԿ (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն) կողմից, իսկ 15.7%-ը նշել է, որ դրանք կազմակերպվել են դպրոցի տնօրինության կողմից։

Առավել հաճախ օգտագործված առցանց հարթակների վարկանիշը







Հանրային հեռուստատեսության դասերը

Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող հեռուստադասերը արդյունավետ կամ շատ արդյունավետ գնահատել է սովորողների 33.7%-ը, իսկ 49.8%-ը, նշել է, որ չեն դիտում կամ տեղյակ չեն այդ դասերից: Սովորողների 15,2%-ը նշել է, որ հեռուստադասերն արդյունավետ չեն: Գյուղաբնակ սովորողների միայն

38%-ն նշել է, որ տեղյակ չէ և չի նայում հեռուստադասերը, մինչդեռ քաղաքաբնակների շրջանում այս ցուցանիշը կազմում է 54.1%: Համապատասխանաբար, գյուղաբնակների 16.5%-ը շատ արդյունավետ, իսկ 32.2%-ը արդյունավետ է գնահատել Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող հեռուստադասերը, մինչդեռ քաղաքաբնակ սովորողների նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 4.9% և 23.2%:

Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող հեռուստադասերը արդյունավետ կամ շատ արդյունավետ գնահատել է ծնողների միայն 26.7%-ը: Ծնողների զգալի զանգված 47.8%-ը, նշել է, որ չեն դիտվում կամ տեղյակ չեն այդ դասերից: Եվս 19.5%-ը նշել է, որ հեռուստադասերն արդյունավետ չեն: Ըստ տարիքի, սեռի, կրթվածության մակարդակի կամ բնակության վայրի ծնողների պատասխանները հիմնականում չեն տարբերվում և գտնվում եմ միջին ցուցանիշի միջակայքում: (https://escs.am/files/files/2020-07-08/7d2cd52ba1106d36cc35bdf5eaabc0ee.pdf):

Հարցումներ իրականացրել եմ Կապանի թիվ 8 դպրոցի ուսուցիչների հետ:(Հավելված 4)

Առցանց ուսուցման ժամանակ առավել հաճախ օգտագործվել են Zoom, Viber հարթակները, Zoom-47.1% Viber-40% Microsoft Teams-11.4%

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման մեջ հարցման արդյունքները՝

Տարբեր հարթակներ օգտագործելու ճկունությանը-32.4%

Նորարարություն, դասավանդման նոր մոտեցումներ-47.1%

Ուսուցիչների աշխատանքային ավելորդ ծանրաբեռնվածություն-20.6% (Հավելված 5):

Եզրակացություն

Այսպիսով կարող եմ նշել, որ տեխնոլոգիաները խնայում են անձնական ժամանակը, հնարավորություն են տալիս առանց տետր ու կարմիր գրիչի գնահատել գրավոր աշխատանքներ: Օգնում են բարձրացնելառարկայի նկատմամբ ճանաչողական

հետաքրքրություն: Աշակերտները ավելի շատ տեղեկություն են ստանում: Բավարարվածության զգացում ես ունենում քո աշխատանքից՝ տեսնելով աշակերտների հետաքրքրվածությունը, ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին: Անընդհատ կատարելագործվում ես որպես մասնագետ, կիրառում ժամանակակից գործիքներ, դասն արդյունավետ դարձնելու համար: Տեխնոլոգիան հաստատ կարող է օգնել ուռսուցիչներին ավելի լավ աշխատանք կատարել, ոչ թե փոխարինել նրանց: Տեխնոլոգիաները իրենց առաջնահերթ տեղն ունեցան հեռավար ուսուցման ժամանակ՝ դասը դարձնելով ավելի հետաքրքիր և արդյունավետ:

Հավելված 4

Առավել հաճախ օգտագործվող առցանց հարթակների վարկանիշ

Կապանի №8 հիմն. դպրոց



Zoom

. Viber

. FB messenger

. Moodle

. Skype

. Microsoft Teams

. Office 365

Եզրակացություն

Ժամանակակից և ավանդական մեթոդների օգտագործումը դասապրոցեսին նպաստում է սովորողի՝ նյութի ավելի լավ ընկալմանը: Փոխվում են իրար հանդեպ վերաբերմունքը, մեծանում է վստահությունը: Յուրաքանչյուր սովորող խմբում ունենում է իր դերը, զգում է իրեն արժևորված: Խմբում մեծանում է նաև կարծիքների փոխանակման դերը, կատարելագործվում է խոսքը, յուրաքանչյուրը քաջ գիտակցում է խմբում իր դերակատարումը:

Այս ամենին հասնելու համար ուսուցիչը նախ և առաջ պետք է ճիշտ ընտրի և ձևավորի խումբը, ուշադրություն դարձնի, որ յուրաքանչյուր խմբից ոչ մի աշակերտ դուրս չմնա, խմբերում ձևավորվեն միջանձնային հարաբերություններ:

Այս մեթոդները թույլ են տալիս՝

. զարգացնել սովորողների խոսքը

. ստեղծել միջանձնային հարաբերություններ

. ապահովել սովորողների առարկայական և վերառարկայան կարողունակությունները:

Ակտիվ ուսումնասիրության մեթոդների կիրառումը նպաստում է՝

Ա} Խմբային աշխատանքով հմտությունների զարգացում

Բ} Ինքնագնահատականի բարձրացում

Գ} Ինքնուրույն կարծիք կազմելու զարգացում

Դ} Ուսուցիչների հետ հաղորդակցվելու հմտություն

. լսելու հմտության զարգացում

. որոշում կայացնելու հմտության զարգացում.

Հետազոտական աշխատանքս գրելիս կիրառել եմ նաև 8 կարողունակությունները՝ վերջնարդյունքիս հասնելու համար:

Հավելված

Առարկա՝	Երաժշտություն
Ուսուցչի անուն, ազգանուն	Վ. Վարդանյան
Ամսաթիվ՝	27.09.2023թ
Դասարան՝	5-րդ
Թեմա՝	<<Օրորոցային>>
Աշակերտների թիվը՝	9
Նպատակ՝	Իմանալ . ի՞նչ է օրորոցայինը . ինչպիսի՞ մասերից է բաղկացած . ի՞նչ նշանակություն ունի
Վերջնարդյունք՝	Կիմանա օրորոցային երգի տեսակները . կստեղծի օրորոցային երգ
Խաչվող հասկացություններ Օրինաչափություն	Տվյալ երգի տեսակի համար ավելի ճիշտ ձև ընտրել
Պատճառ և հետևանք	Քանի որ օրորոցային երգը բաղկացած է 2 մասից, բաժանել խմբերի:
Կիրառվող մեթոդներ՝	Մտագրոհ, ԳՈՒՍ
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, ՏՀՏ,
Կապը իրական կյանքի հետ՝	Օրորոցային երգերի իմացությունը կարևոր է:
Դասի ընթացքը՝	Քանի եր թեման քիչ թե շատ ծանոթ է, դասի իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանել 2 հոգանոց 4 խմբի և տալ թեմային վերաբերող հարցեր: Նրանք կկարդան և կգրեն երաժշտության տետրի մեջ: Կշռադատման փուլում կներկայացնեն իրենց նշումները ԳՈՒՍ-ի միջոցով:
Գնահատում՝	Կատարել միավորային գնահատում
Տնային աշխատանք՝	Սովորել երգը և նոտաները անգիր
Անդրադարձ՝	Ելքի քարտ

Առարկա՝	Երաժշտություն
Ուսուցչի անուն, ազգանուն՝	Վ. Վարդանյան
Ամսաթիվ՝	28.09.2023թ
Դասարան՝	6-րդ
Թեմա՝	<<Երաժշտական ժանր>>
Աշակերտների թիվը՝	9
Նպատակ՝	. Ի՞նչ է երաժշտական ժանրը . տարբերակել երգը, օպերան . զարգացնել սիմֆոնիայի տեսքը
Վերջնարդյունք՝	. կիմանա երաժշտական ժանրերը . կտարբերակի երաժշտական ժանրերի տեսակները
Խաչվող հասկացություններ՝	Պատճառ և հետևանք Ներկայացնել երաժշտական ժանրերի գրելու ձևը Ժամանակ և տարածություն Ի՞նչ տարածության մեջ է ստեղծվել
Կիրառվող մեթոդներ՝	Մտագրոհ, հարցերի տարակ.
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, ՏՀՏ
Կապը իրական կյանքի հետ՝	Երաժշտական ժանրերի իմացության կարևորությունը
Դասի ընթացքը՝	Ուսուցչուհին աշակերտների ուշադրությունը սևեռելու համար դասը սկսում է մտագրոհով: Ապա ներկայացնում է դասը; Սովորողները կկարդան և նշումներ կանեն: Կշռադատման փուլում կներկայացնեն իրենց նշումները և հարցերով կամփոփվեն:
Գնահատում՝	Գնահատել ակտիվ աշակերտներին
Տնային աշխատանք՝	Համացանցից դուրս բերել թեմային վերաբերող նյութեր
Անդրադարձ՝	Ելքի քարտ

Առարկա՝	Երաժշտություն
Ուսուցչի անուն, ազգանուն՝	Վ. Վարդանյան
Ամսաթիվ՝	01.10.2023թ
Դասարան՝	7-րդ
Թեմա՝	<<Հոգևոր երաժշտություն>>
Աշակերտների թիվը՝	11
Նպատակ՝	. զարգացնել հոգևոր երաժշտությունը սովորողների շրջանում . ի՞նչ նշանակություն ունի հոգևեր երաժշտությունը
Վերջնարդյունք՝	. կտարբերակի հոգևոր երգերը . կառանձնացնի հոգևոր երաժշտության տարրերը
Խաչվոց հասկացությունները՝	Պատճառ և հեևանք Ի՞նչ պատճառով են ստեղծվել հոգևոր երգերը Համակարգ և մոդել Հոգևոր երաժշտությունը առանձին խմբավորում է
Կիրառվող մեթոդ՝	ԳՈՒՍ, Պրիզմա
Կապը իրական կյանքի հետ՝	Ներկայացնել հոգևոր երաժշտության կարևորությունը
Դասի ընթացքը՝	Ուսուցչուհին ներկայացնում է հոգևոր երաժշտության ժանրերը: Ապա <<ԳՈՒՍ>> մեթոդի միջոցով ներկայացնում են առանցքային գաղափարները: Կշռադատման փուլում կներկայացնեն իրենց նշումները և պրիզմայի միջոցով կամփոփեն:
Գնահատում՝	Կատարվում է ակտիվ աշակերտների գնահատում
Տնային աշխատանք՝	Դասը պատմել
Անդրադարձ՝	Հարցերի տարափ

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Խաչատրյան, <Ուսուցման արդյունավետ հնարներ> էջ 42

2. Gordon S. R., Gordon J. G., Information Systems, a Management Approach, New York 1996, p. 6-7

3. Կրթության տեխնոլոգիայի միտումները ժամանակակից հասարակության համար,
https://elearningindustry.com/trends-in-education-technology-modern-society
4.https://www.tandfonline.com/doi/abs.10.1080/01587919.2019.1681894?journalCode=cdie20,
5. https://elearningindustry.com/trends-in-education-technology-modern-society
6. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56573
https://escs.am/files/files/2020-07-08/7d2cd52ba1106d36cc35bdf5eaabc0ee.pdf):